# ԷՋՄԻԱԾԻՆ



## ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

**Հունիսի 1-ին, հինգշաբթի.—Տոն սրբոյն Յովհաննու Կարապետին և Աթանագինեայ եպիսկոպոսին. Եկեղեցական հանդէս ի վանս ս. Ծաղկաքի.**

Այսօր ս. Ծաղկաց եկեղեցում ս. պատարագ է մատուցում տ. Վարդան քհն. Քեշիշյանը (Արովյանից):

Ս. պատարագին ներկա են լինում Մայր Աթոռի միաբանությունը և հոգևոր ճեմարանի ուսանողությունը:

* * *

**Հունիսի 3-ին, շաբաթ.—Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ելն ի վիրապէն.**

Այսօր Մայր տաճարում, Իջման ս. սեղանի առաջ, ս. պատարագ է մատուցում տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը:

* * *

**Հունիսի 4-ին, կիրակի.—Տոն կաթուղիկէ ս. Էջմիածնի.**

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում Ավստրալիայի և Նոր Զելանդիայի թեմի առաջնորդ տ. Գարեգին եպս. Գազանճյանը և պատարագի ավարտին քարոզում «Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա» բնաբանով:

Այնուհետև, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է հայրապետական մաղթանք՝ «ի յիշատակ կաթուղիկէ ս. Էջմիածնի»:

* * *

**Հունիսի 7-ին, չորեքշաբթի.**—Այսօր Ավստրալիա՝ իր պաշտոնատեղին է մեկնում տեղի հայոց առաջնորդ տ. Գարեգին եպս. Գազանճյանը:

* * *

**Հունիսի 8-ին, հինգշաբթի.**—Այսօր հոգևոր ճեմարանում ավարտվում են ամավերջի քննությունները:

* * *

**Հունիսի 12-ին, երկուշաբթի.**—Այսօր ավարտական հոգևոր ճեմարանի ուսանողությունն ու դասախոսական կազմը չորսօրյա պտույտի են մեկնում Էջմիածին—Արթիկ—Լենինական — Կիրովական — Ալավերդի — Դիլիջան—Սևան—Երևան —Էջմիածին եր-

թուղով՝ այցելելով մեր պատմական վանքերն ու եկեղեցիները:

* * *

**Հունիսի 12-ին, երկուշաբթի.**—Այսօր Մայր Աթոռ է ժամանում Շվեդիայի պառլամենտի անդամ և արտաքին հարաբերությունների կոմիտեի փոխ-նախագահ ու Եկեղեցիների համաշխարհային խորհրդի միջեկեղեցական գործերի հանձնաժողովի նախագահ պրն. Օլլե Դահլենը՝ իր ազնվափայլ տիկնոջ հետ:

Պատվարժան հյուրերին ընկերակցում էին Զագորսկի հոգևոր ճեմարանի դասախոս պրոֆ. Կ. Կոմարովը և օրիորդ Ն. Գորինան՝ որպես թարգման:

Հյուրերին Երևանի օդանավակայանում դիմավորում է Մելբուռնի և շրջակայքի հայոց հոգևոր հովիվ տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանը:

Նրանք այցելում են Մայր տաճար և այնուհետև ընդունվում Վեհափառ Հայրապետի կողմից Վեհարանում:

Հաջորդ օրը, հունիսի 13-ին, ի պատիվ շվեդացի հյուրերի, տրվում է ճաշկերույթ, որին ներկա են լինում Վեհափառ Հայրապետը, պրն. Օլլե Դահլենը՝ իր տիկնոջ հետ, պրոֆ. Կ. Կոմարովը, օրիորդ Ն. Գորինան, Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը, տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանը, Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար Պարգև Շահբազյանը և ուրիշներ:

Ճաշկերույթի ընթացքում Վեհափառ Հայրապետի, շվեդացի հյուրերի և մյուս ներկաների միջև տեղի է ունենում ջերմ զրույց՝ սրտագին մթնոլորտում:

Մայր Աթոռում գտնվելու ընթացքում պատվարժան հյուրերը այցելում են Հայաստանի գիտությունների ակադեմիա, ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, Ծիծեռնակաբերդի հայ նահատակաց հուշարձան, «Էրեբունի» թանգարան ու միջնաբերդ, ս. Գեղարդ ու Գառնի:

Հունիսի 15-ին, հինգշաբթի օրը, առավոտյան, շվեդացի հարգարժան հյուրերը մեկնում են Մոսկվա:

Երևանի օդանավակայանում նրանց ճանապարհում է տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանը:

* * *

**Հունիսի 18-ին, երեքշաբթի.**—Այսօր Մայր Աթոռ է ժամանում Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը:

* * *

**Հունիսի 15-ին, հինգշաբթի.**—Զորսօրյա պտույտից հետո Մայր Աթոռ են վերադառնում հոգևոր ճեմարանի ուսանողությունն ու դասախոսական կազմը:

* * *

**Նույն օրը, երեկոյան, Մայր Աթոռ է ժամանում Զագորսկի հոգևոր ճեմարանի շրջանավարտ տ. Գեորգի քահանա Կրասնոլոժկինը:**

Արժանապատիվ տեր հորը Երևանի օդանավակայանում դիմավորում է բարեշնորհ Ալեոտիք սրկ. Արաբաջյանը:

Տ. Գեորգի քհն. Կրասնոլոժկինը այստեղ զբաղվելու է իր ավարտաճառով, որի թեման է «Հայ եկեղեցին և նրա արդի վիճակը»:

* * *

**Հունիսի 22-ին, հինգշաբթի.—Տոն սրբոց թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրովբայ.**

Այսօր Մայր Աթոռի միաբանությունն ու հոգևոր ճեմարանի ուսանողությունը ուխտի են գնում Օշական՝ ս. Մեսրոպի դամբարան:

Օրվա հանդիսավոր ս. պատարագը մատուցում է Վիեննայի հայոց հոգևոր հովիվ տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը և քարոզում ս. Սահակի և ս. Մեսրոպի կյանքի և գործունեության մասին:

Հավարտ ս. պատարագի տեղի է ունենում հոգեհանգիստ՝ եկեղեցու նորոգության բարերարների՝ Ղազարոսյան և Ալեքսյան գերդաստանների ննջեցյալների հոգիների համար:

* * *

**Հունիսի 25-ին, կիրակի.—Ե կիրակի զկնի Հոգեգալստեան. Գիւտ տփոյ սրբուհւոյ Աստուածածնի.**

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանը և քարոզում «Համբերութեամբ ձերով ստասջիք զոգիս ձեր» (Ղուկ. ԻԱ 19) բնաբանով:

*
* *

**Հունիսի 27-ին, երեքշաբթի.**—Այսօր Բեյրութի վրայով Փարիզ՝ իր պաշտոնատեղին է մեկնում Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը:

Երևանի օդանավակայանում սրբազանին ճանապարհում էին տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը, տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանը և Հակոբ սրկ. Գյուլչյանը:

Սերովբե սրբազանը Մայր Աթոռում գտնըված օրերին, հունիսի 24-ին, ուխտի է մեկնում Տաթևի պատմական վանքը՝ ընկերակցությամբ Հակոբ սրկ. Գյուլչյանի:

*
* *

**Հունիսի 30-ին, ուրբաթ.**—Այսօր առավոտյան Բեյրութի վրայով Մելբուռն՝ իր պաշտոնատեղին է մեկնում տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանը:



Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը Տաթևի վանքում, այլ ուխտավորների հետ

